ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ՍՈՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Անիի Մայր տաճարի ԺԸ. դարի ավագերեց Սամվել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» Ժամանակագրությունը սկսվում է Ադամից եւ հասնում մինչեւ 1163 թ.: Այժմ հայտնի է Ժամանակագրության ամբողջական կամ մասնակի 71 ընդօրինակություն, որոնցից հնագույն չորսի օգտագործմամբ վերջերս այն հրատարակվել է համեմատական բնագրով[1]: Սակայն ժամանակագրության ձեռագրերի մեծ մասի առանձնահատկությունն այն է, որ հեղինակային տեքստը ենթարկվել է բազմաթիվ ընդմիջարկությունների, իսկ որոշ դեպքերում տարբեր հեղինակների ձեռքով շարունակվել եւ հասցվել է մինչեւ ԺԷ.-ԺԸ. դարերը: Ժամանակի ընթացքում ընդմիջարկություններն ու լրացումները ծավալով գերազանցել են Սամվել Անեցու բուն Ժամանակագրությանը: Այդ հավելումների մի մասը տեղ է գտել Ժամանակագրության հայերեն առաջին՝ Ա. Տեր-Միքելյանի կազմած 1893 թ. վաղարշապատյան հրատարակության մեջ[2]: Մաշտոցյան Մատենադարանում պահվող ժամանակագրության ձեռագրերում առկա ընդմիջարկությունների ու լրացումների մի մասն էլ հրատարակվել է 2009-ին[3]: Այժմ ուսումնասիրվում են հայկական ձեռագրական մյուս հավաքածուներում եղած նյութերը: Դրանք բոլորն առաջիկայում միասնաբար տեղ կգտնեն «Սամվել Անեցու եւ շարունակողների ժամանակագրությունը» ծավալուն հատորում: Մինչ այդ, ստորեւ հրապարակում ենք արտասահմանյան հավաքածուների ձեռագրերից քաղված պատմական զանազան տեղեկություններ պարունակող եւ որոշակի հետաքրքրություն ներկայացնող մի շարք ժամանակագրական միավորներ:

---

1 **Սամուէլ Անեցի,** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը պատրաստեց՝ Ա. Հայրապետյան, Երեւան, 2011:

2 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլեանի, Վաղարշապատ, 1893:

3 **Կ. Մաթեւոսյան,** Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 98-175:

Ձեռագրերից հինգը Վենետիկի Մխիթարյան մատենադարանից են[4], երկուսը՝ Հռոմից եւ Տյուբենգենից, որոնց մանրաժապավենները Մատենադարանը ձեռք է բերել վերջին տարիներին: Տեղեկություններից առաջ նշվում են Սամվել Անեցու ժամանակագրության մեջ կիրառված Փրկչական (հայկական քրիստոնեական) թվականը, որը երկու տարով ավելի է ներկա թվականից[5], եւ Հայոց թվականը: Ընթերցողի գործը դյուրացնելու համար առաջին սյունակում նշում ենք նաեւ Հայոց թվականին համապատասխանող արդի թվականը: Ժամանակագրական միավորներից յուրաքանչյուրի սկզբում դրված է ձեռագրի համառոտագրությունը (հավաքածուի տեղանվան սկզբնատառը եւ ձեռագրի թվահամարը):

Վ1253	Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, ձեռ. թիվ 1253: ԺԴ. դարի մատյան է, ընդօրինակել է Հակոբ գրիչը: Գրչության վայրն անհայտ է, բայց դատելով գրչի կատարած հավելումներից, նա Երզնկայի կամ շրջակայքի բնակիչ էր: Ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1301 թ.:
Վ288	Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, ձեռ. թիվ 288:- 1696 թ. մատյան է, ընդօրինակել է Միքայել գրիչը Եւդոկիայում: ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1424 թ.: Ընագրի մեջ կատարված հավելումներն ընդհանրություններ ունեն Մատենադարանի թիվ 1869,1483,1484, 6483 ձեռագրերի հետ:
Վ1227	Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, ձեռ. թիվ 1227:-1650 թ. մատյան է, ընդօրինակել է Զաքարիա վրդ. Սյունեցին Հռոմում կամ Լեհաստանում: ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1222 թ.:
Վ869	Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, ձեռ. թիվ 869:-1683 թ. ձեռագիրն ընդօրինակել է Դավիթ Ճնճղուկ գրիչը Բաղեշում: ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1683 թ.:
Վ2261	Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, ձեռ. թիվ 2261:-1833 թ. ընդօրինակություն է, ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1696 թ.:
Հ3	Հռոմ (Վատիկանի գրադարան), ձեռ. թիվ 3: -1287 թ. ժողովածու է, ընդօրինակել է Ստեփանոս գրիչը, Հեթում Կռոիկոսցի (պատմիչ) իշխանի համար: ժամանակագրությունը հասնում է մինչեւ 1271 թ.: Գրչության վայրը՝ Կիլիկիա: Հավելումները հիմնականում վերաբերում են խաչակիրների արշավանքներին:

4 Վենետիկում ժամանակագրության ձեռագրերն ուսումնասիրել ենք 2011 թ. նոյեմբերին, որի համար շնորհակալություն ենք հայտնում Մխիթարյան միաբանության աբբահայր Եղիա ծ. վ. Քիլաղպյանին - Կ. Մ.:

5 Այս մասին տե՛ս **Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան**, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, ՀՍՍՌ ԳԱ հասարակական բաժանմունքի Տեղեկագիր, 1949, թ. 2, էջ 82, **Բ. Թումանյան,** Տոմարի պատմություն, Երեւան, 1972, էջ 132:

S93	Տյուբենգենի համալսարան (Գերմանիա), ձեռ. թիվ 93: ԺԷ. դարի ժողովածու է, որի հիմնական մասի գրիչը Հակոբն է, իսկ ժամանակագրության հարվածինը՝ Կարապետ քահանան, որի անունը դուրս է մնացել Տյուբենգենի 1907 թ. հրատարակված գերմաներեն ձեռագրացուցակից, բայց առկա է ձեռագրի հիշատակարաններից մեկում[1]: Ժամանակագրությունը հասնում է մինչև 1423 թ., գրչության վայրն անհայտ է:

***

Արդի թվական	Փրկչ. թվական	Հայոց թվական	
651	ՈԾԳ.	Ճ.	(S93) Խաչն երեւեցաւ ի Վարազ[2]:
692	ՈՂԴ.	ՃԽԱ.	(Վ288) Ի սոյն ամի շինեաց Մալիմն զՄամեստիա, որ է Մսիս, բարձր պարսպօք:
737	ՉԼԹ.	ՃՁԶ.	(Վ1253) Վահան Գողթնեցի նահապակեցաւ[3]:
779	ՉՁԱ.	ՄԻԸ.	(Վ288) Կոստոռումն իշխանացն Արծրունեաց Սահակայ եւ Համազասպայ:
802	ՊԴ.	ՄԾԱ.	(S93) ՄԾԱ. (802) թըվին շարժեցաւ երկիր սաստիկ եւ լերինքն կողոտու, որ կան աստի եւ անտի, հրպեցան առ միմեանս եւ տեսին մարդիկք եւ փլաւ լեառն մի, եւ անկաւ յԵփրատ եւ արգել զնա աւր մի եւ գնայր գետն ի վեր եւ բազում լերինք խլեցան եւ յոլով աղբիւրք բացան ջրոյ եւ կպրոյ եւ նաֆթոյ եւ բազումք խցան յաղբերաց:
848	ՊԾ.	ՄՂԷ.	(Վ288) Յայսմ ամի շինեցաւ Գանձակ:
896	ՊՂԸ.	ՅԽԵ.	(Վ288) Շարժն տարաւ զԴվին քաղաք առհասարակ եւ պակաս մարդ ապրեցաւ:
1002	ՌԴ.	ՆԾԱ	(Վ288) Ասպանօր տիեզերալոյս եւ մեծ վարդապետն Հայոց Գրիգորիոս Նարեկացին, որդի տեառն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի, յայսմ վայրի շինեաց զիւր գիրքն[4]:

1046	ՌԽԲ.	ՆՂԵ.	(Վ.1227) Յայսմ ամի բարձաւ թագաւորութիւն Հայոց ի ՆՂԵ. (1046) թուականին: Զկնի տէր Պետրոսին, որ փոխեաց ժամանակ հայրապետութեան ամք Լ. (30) եւ սայ յետ կործանմանն Անւոյ վկարեալ զաթոռս հայրապետութեան իւրոյ ի Սեբաստիայ:
1047	ՌԽԹ.	ՆՂԶ.	(Վ.1253) Գրիգոր Մագիստրոսն պըւեպիկոս եղեալ[5]:
1057	ՌԾԹ.	ՇԶ.	(Վ.1227) Տէր Խաչիկ քուեր որդի տէր Պետրոսի՝ ամս Բ. (2) եւ յետ այնորիկ զամս չորս առանց կաթողիկոսի մնաց աշխարհս Հայոց, զի վկարեցաւ աթոռ հայրապետութեան ի Սեբաստիայ եւ խափանեցին Յոյնք ձեռնադրել կաթողիկոս Հայոց, մինչեւ Մարիամ՝ դուստր թագաւորին Գագկայ[6] մեծաւ աղաչանաւք խնդրեաց յարքայէն Հոռոմոց եւ նայ յուաւ աղաչանացն Մարիամու: Եւ առաքեաց Մարիամ, խնդրեաց եւ եգիտ զԳրիգորիս՝ զորդի Գրիգորի Մագիստրոսի՝ Պահլաւունի ազգաւ: Սա թողեալ զհայրենի պատիւն, կրաւնաւորութեան հետեւեցաւ, եւ բռնադատեալ զսա բազում աղաչանաւք նստուցին յաթոռ հայրապետութեան յամի ԾԺԴ. (1065) թուականին Հայոց:
1072	ՌՀԴ.	ՇԻԱ.	(Վ.288) Մեռանի Բագրատ[7]:
1085	ՌՁԷ.	ՇԼԴ.	(Վ.288) Ի սոյն ժամանակս ի Դ. (4) բաժանեցաւ կաթողիկոսութիւն Հայոց՝ տէր Վահրամ՝ յԵգիպտոս, տէր Բարսեղ՝ յԱնի, տէր Պօղոս՝ հայրն Վարագայ՝ ի Մարաշ, տէր Թորոս՝ ի Հեյնի[8]:
1098	ՌՃ.	ՇԽԷ.	(Հ3) Զաւրքն Փռանկաց առին զՄեծն Անտիոք ի յանաւրինաց:
1099	ՌՃԱ.	ՇԽԸ.	(Հ3) Զաւրքն Փռանկաց առին զՍուր[9], քաղաքն յԵրուսաղէմ:
1101	ՌՃԳ.	ՇԾ.	(Հ3) Զաւրքն Փռանկաց առին զԿեսարիա Պաղեստինացոց[10]:
1109	ՌՃԺԱ.	ՇԾԸ.	(Հ3) Զաւրքն Փռանգաց առին զՏռապալիս[11] ի յանաւրինաց:
1145	ՌՃԽԷ.	ՇՂԴ.	(Հ3) Ըռն պր Փրանցն պաշարեաց զԴամասկոս:

1153	ՌՃԾԵ.	ՈԲ.	(Ն3) Զաւրքն Փռանգաց առին զԱսխալան[12] ի Տաճկաց:
1170	ՌՃՆԲ.	ՈԺԹ.	(Ն3) Եղեւ շարժ մեծ եւ փլաւ Անտրաք, Տրապօլիս եւ այլ բազում քաղաքք:
1180	ՌՃՁԲ.	ՈԻԹ.	(Ն3) Անաւրէնք յաղթեցին Կի[13] թագաւորին Երուսաղէմի եւ առին զերկիրն:
1189	ՌՃՂԱ.	ՈԼԸ.	(Վ288) ԶԹամարն կոտորեաց թուրքն սաստիկ յոյժ ի դուռն Շամքօրայ:
1191	ՌՃՂԳ.	ՈԽ.	(Ն3) Անաւրէնք առին զԱքքայ:
1193	ՌՃՂԵ.	ՈԽԲ.	(Վ288) Մելիք Էրիկն ի Խլաթ գնաց եւ չըկարաց առնուլ:
1196	ՌՃՂԸ.	ՈԽԵ.	(Ն3) Մելիք յԱրիկն էառ զՃաֆն[14]:
1197	ՌՃՂԹ.	ՈԽԶ.	(Վ1253) Տեսեալ զառաջադիմութիւն բարեպաշտին Լեւոնի, թագ առաքեն նմա ազգն Փռանգաց եւ հայրապետն Հայոց Գրիգոր Ապի(ռատն) աւծանեն զնա թագաւոր Հայոց: Եւ ազգն հազարացուցն, որ ի Դամասկոս եւ ի սահմանս նոցա, առաքեն առ նա՝ հարկս տալ նոցա: Եւ իսկոյն դիմեալ ի վերայ նոցա թագաւորն Լեւոն, եհար զնոսա հարուածս մեծամեծս, եւ յայնմհետէ զահի հարկեալ երկնչէին ամենեքեան:
1198	ՌՄ.	ՈԽԷ.	(Վ288) Զաքարէ եւ Իւանէ տիրեցին Հայոց եւ Վրաց եւ զԱնի բերդ առին ՈԽԷ (1198) թուին[15]: (Ն3) Ցամաքեցաւ գետն Եգիպտոսի եւ սատկեցան ի նոցանէ բազումք ի սովոյ:
1200	ՌՄԲ.	ՈԽԹ.	(Ն3) Մեռաւ բրինձն Անտրաքոյ Պէմունտն եւ տիրեաց որդին իւր կոմսն Տրապաւլսոյ[16]:
1204	ՌՄԶ.	ՈԾԳ.	(Ն3) Հեմրի թագաւորն Կիպրոսի գնաց ծովով յԵգիպտոս եւ կոտորեաց բազումս յանաւրինաց[17]:
1205	ՌՄԷ.	ՈԾԴ.	(Վ288) Աշրաֆն զՄուշ էառ: Վրացին զԱրճիշ կոտորեաց:
1214	ՌՄԺԶ.	ՈԿԳ.	(Ն3) Տվին զԱնտիոք յՌոբէն բրինձն[18]:
1231	ՌՄԼԳ.	ՈՁ.	(Վ1253) Կոտորեաց զՏաթարն յԵզնկայ քաղաքն, ի սոխնոցն բազում մարդիկ:
1236	ՌՄԼԸ.	ՈՁԵ.	(Վ1253) Շարժ եղեւ եւ ի Սուրբ Գրիգոր եւ ի Թորդան եկեղեցի փլաւ եւ դարձեալ շինեցաւ:

1237	ՌՄԼԹ.	ՈՁԶ.	(Ն3) Զարքն Հալպա կոտորեցին զԴամբլցիք ի Դարպսակն[19]: Եղեւ պատերազմ Լանկպարտացն ի Կիպրոս, եւ յաղթեցան Լանկուպարտքն[20]:
1239	ՌՄԽԱ.	ՈՁԸ.	(Ն3) Ռե տը Նաւարն եւ այլք բազումք ի Ֆռանգաց եկին ի յԱքքա եւ կոտորեցան ի Ղազզէ եւ յԱսխալան[21]:
1241	ՌՄԽԳ.	ՈՂ.	(Վ1253) Իշխանն Աւագ, որդի Իւանէի եկն առ Զարմաղանն եւ ի սկզբանն սպառնացաւ, բայց յետոյ մեծարեաց եւ եւր ի ձեռն նորա զիւր աշխարհն եւ ընդ ինքեան շրջեցուցանէր, եւ գան ի վերայ քաղաքին Անոյ եւ լի ոչ եկին հնազանդութիւն, պատերազմաւ առնու զնա եւ բազում կոտորած առնէ: Բայց նախախնամութիւն Աստուծոյ երեւեցոյ, զայր մի ի մէջ նոցա, Ասորի ազգաւ, անուն նորա Սիմէոն, զոր Ռապան Աթա կոչէին, որ եւ բազում դիւրութիւն Քրիստոնէիցն զնովաւ լիներ. զի երթեալ առ դանն ա՛ռ թուղթ ի նմանէ, զի մի՛ զանմեղ մարդիկ սպանցեն եւ լսէին ամենեքեան նմա: Ապստամբեաց Լամբրաւնացի Կոստանդին ի թագաւորէն Հեթմոյ եւ եկ առ ի Խիաթատին սուլտանն եւ առեալ զաւրս գայ ի Կիլիկէ եւ յաղթեալ լինի:
1242	ՌՄԽԴ.	ՈՂԱ.	(Ն3) Մելիք Նասրն եւր զԵրուսաղէմ Քրիստոնէիցն, եւ խորազմիքն մտին ի Շամպն[22]:
1249	ՌՄԾԱ.	ՈՂԸ.	(Վ1253) Տէր Սարգիս եպիսկոպոս լեալ Եզնկային:
1252	ՌՄԾԴ.	ՉԱ.	(Վ1253) Ի սահմանս Խաչենոյ կարկուտ եկն սաստիկ, եւ ասացին ձկունք զհետ անկանել իբրեւ թզաչափս:
1254	ՌՄԾԶ.	ՉԳ.	(Վ1253) Շարժմամբ կործանեցաւ Եզնկայն:
1256	ՌՄԾԸ.	ՉԵ.	(Վ1253) Եկն Ղատա դանն յԵզնկայն եւ զքուրդն կոտորեաց եւ զԿամախ սղարեաց:
1264	ՌՄԿԶ.	ՉԺԳ.	(Վ1253) Հրամանաւ Հուլաուինի գնաց տէր Սար[գի]ս ի Կոստանդնուպալիս եւ առնու զդուստր թագաւորին Պալիալաւղի եւ ի դառնալն՝ զի վախճանեալ էր, առնու Ապաղայ[23]:
1273	ՌՄՀԵ.	ՉԻԲ.	(Վ1253) Յայտնեցաւ նշխարք սրբոյն Ներսէսի ի Թիլն:
1275	ՌՄՀԷ.	ՉԻԴ.	(Վ1253) Կատարեցաւ Սուրբ Կաթողիկէն յԵզնկայն:

1276	ՌՄՂԸ.	ՉԻԵ.	(Վ1253) Ասպանաւր զմեծ քահա(նայա)պետն Եկեղեաց գաւառին զտէր Սարգիս, ի սուրբ քառասնորդսն, անաւրէն հազարացիքն սպանին[24]:
1284	ՌՄՁԶ.	ՉԼԳ.	(Վ288) Ի Տփխիս ջրհեղեղ երեկ:
1285	ՌՄՁԷ.	ՉԼԴ.	(Վ1253) Հալաչաւն եւ Քայղաթուն ձմերեցին յԵզնկայն: Խարամանն զերեաց զերկիրն Տարսոնի՝ Կիլիկիա:
1289	ՌՄՂԱ.	ՉԼԸ.	(Վ1253) Շարժ եղեւ յԵզնկայն եւ բազումք մեռան ի քաղաքին:
1293	ՌՄՂԵ.	ՉԽԲ.	(Վ288) Դարձեալ գերեցին զԹիլն:
1313	ՌՅԺԵ.	ՉԿԲ.	(Վ288) Յայսմ ամի առաւ մայրաքաղաքն Մելտենի ի Հայոց ի եւ ի հազարացոց եւ խոտոր գերութեամբ վարեցան յԵգիպտոս:
1336	ՌՅԼԸ.	ՉՁԵ.	(Վ869) Յետ մահուանն Լեւոնի, վասն ոչ զոլոյ նմա որդի, առնու զթագաւորութիւնն Կոստանդին Ջուան Ա. (1) ամ, որ յազգէ նորին, որ եւ սա վասն անպարկեշտ վարուց սպանեալ եղեւ ի զօրաց իւրոց[25]:
1375	ՌՅՀԷ.	ՊԻԴ.	(Վ288) Ի ՊԻԴ (1375) սովն սաստիկ էր յԱսորեստան: Զամիր Հաճն սպանին, զԴիադնի որդին, Բաղէշու տիրոջ որդին, որ էր այր բարի ի Քրիստոնէից:
1381	ՌՅՁԳ.	ՊԼ.	(Վ869) Ասէր զտեալ եղեւ զարհեստ թվանկի եւ թօփի ի Վէնետիկցւոցն:
1382	ՌՅՁԴ.	ՊԼԱ.	(Վ869) Տէր Թէոդորոս (կթղ.) ամս Թ. (9), զսա սպանին ԺՁ. (16) փանուտէրօք:
1403	ՌՆԵ.	ՊԾԲ.	(Վ869) Ի սոյն ժամանակի Լանկ Թամուրն շինեաց յԱղուանից արեւելս քաղաք մի՝ Բաղաղայ անուն, եւ ի տօնի Հրեշտակապետացն եկն ձիւն սաստիկ եւ սպան ի շինօղացն ԴՌ. (4000) անձինս: Եւ ապա ջրեալ գնաց ի Սմրղընդ եւ անդ սատկեցաւ: Թիւ ժամանակաց նորա, որ տիրեալ դրուց աշխարհիս՝ ամս ԺԸ. (18): Յետ մահուանն որդիքն եւ թոռունքն ընդ իրեարս խառնեցան պատերազմաւ եւ ի միմեանս սատակեցան եւ բնաջինջ եղեն եւ յետք նոցին, ոչ երեւէին:
1405	ՌՆԷ.	ՊԾԴ.	(Վ869) Տէր Գրիգոր ամս Է. (7)՝ Խանձողատն, զոր եւ աքսորեցին եւ հոգով սպանին[26]:

1431	Ռ.ՆԼԳ.	ՊՁ.	(Վ.2261) Ջհանշէն զՇամշուլտոյ բերդն առաւ:
1441	Ռ.ՆԽԳ.	ՊՂ.	(Վ.869) Մինչ յայս կաթողիկոսք ի Սիս նստէին: Յետ այսօրիկ ազդմամբ Հոգոյն Սրբոյն ժողովեցան ի Վաղարշապատ եպիսկոպոսք եւ վարդապետք եւ հաստատեցին զաթոռ սուրբ Լուսաւորչին՝ զՍուրբ Էջմիածին, եւ աւրհնեցին կաթողիկոս զտէր Կիրակոսն, ճգնաւոր առաջնորդն Սուրբ Վիրապին, որ եկաց ամբ Բ. (2) ի թւին ՊՂ. (1441):
1444	Ռ.ՆԽՁ.	ՊՂԳ.	(Վ.869) Ջհանշէն զԱխալցխայ գերեաց:
1653	Ռ.ՈԾԵ.	ՌՃԲ.	(Տ93) Թվին ՌՃԲ. (1653) օգոստոսի Բ. (2) պատկեր օրն չորեքշաբթի, խաւարեցաւ արեգակն Է. (7-րդ) ժամուն աւուրն մինչեւ Թ. (9) ժամն: Յայսմ ամի մեռան վաղճանեցան Էջմիածնայ կաթողիկոսն տէր Փիլիպոսն եւ Սըսայ Ներսէս կաթողիկոսն Սեփաստացի եւ Առիստակէս վարդապետն Խարդբերդցի[27]:
1681	Ռ.ՈՁԳ.	ՌՃԼ.	(Վ.2261) Ի սոյն թվին նահատակեցաւ ի Ստամբօլ Գրիգոր ոմն ի Կարնոյ, ի գեղջէն Կանայ, մայիս ԺԹ. (19):
1692	Ռ.ՈՂԴ.	ՌՃԽԱ.	(Վ.2261) Աւետիք վարդապետ շինե(ա)ց ի հիմանէ զԽնդրակատար Սուրբ Աստուածածին վանքն զարմանալի:
1694	Ռ.ՈՂՁ.	ՌՃԽԳ.	(Վ.2261) Վարդան վարդապետ շինե(ա)ց զԱմիրդօլու Սուրբ Յովաննու վանքն պարսպովն եւ խցերով:
1695	Ռ.ՈՂԷ.	ՌՃԽԴ.	(Վ.2261) Սաստիկ շարժ եղեւ ի Բաղէշ, որ շատ տներ աւիրան եւ փլան՝ ՌԺԲ. (612) եւ Մ. (200) մարդ մեռան ի գիւղ եւ ի քաղաք:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Կարապետ քահանան ձեռագրի 485 էջի չափածո հիշատակարանում գրում է.

Զծոյլս ի բարիս,
Զանժարս ի չարիս,
Զքահանայս յեկնիս,
ԶԿարապետ գերիս,
Ոչ եմ յիշելիս,
Ի յայսմ սուրբ պառիս:

2 Հայկական եկեղեցական ավանդությունը Վարագա Ս. Խաչի հայտնությունը վերագրում է 653 թվականին:

3 Վահան Գողթնեցին նահատակվել է 737 թ.:

4 Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի գրության ստույգ տարեթիվն է, որը նշված է հեղինակի հիշատակարանում:

5 Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, 1045-ին իր հայրենի Բջնին բյուզանդական կայսրությանը հանձնելով, ստացավ մագիստրոսի պատվաստիճան եւ զինվորական ծառայության անցավ Տարոնում ու Հյուսիսային Միջագետքում: Այդ շրջանում թերեւս նա որոշ ժամանակ գտնվել է նաեւ Կոստանդնուպոլսում: Հնարավոր է, որ վերոնշյալ տեղեկությունը վերաբերում է Գրիգոր Մագիստրոսի ձեռամբ Հազարտողյանի գրությանը:

6 Խոսքը Կարսի վերջին թագավոր Գագիկ Աբասյանի Մարիամ դստեր մասին է: Ըստ Վարդան Արեւելցու նոր կաթողիկոսի ընտրության թույլատվության համար կայսերը խնդրել է հենց Գագիկը, իսկ Կղեմես Կալանոսի հաղորդմամբ այդ միջնորդությունն արել է նրա դուստր Մարիամը Եւդոկիա կայսրուհու առաջ (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա., Էջմիածին, 2001, էջ 1486):

7 Վրաց թագավոր Բագրատ Դ (1027-1072):

8 Այս տեղեկությունը, փոքր տարընթերցումներով, տարբեր ձեռագրերում զետեղված է տարբեր թվականների ներքո՝ Մատենադարանի թիվ 1899-ի ՇԼԱ.-ից (1082) մինչեւ՝ Վենետիկի թիվ 911-ի՝ ՇԼԷ. (1088): Սակայն ավելի ստույգ է Վենետիկի թիվ 288-ը՝ ՇԼԴ. (1085 թ.), քանի որ հենց այդ թվականին Փիլարտոս Վարաժնունին եւս մի կաթողիկոս ձեռնադրել տվեց: Հոնիում Սարգսին հաջորդած Թեոդորոս Ալախոսիկ (Թորոս) կաթողիկոսին նա կանչեց իր նոր նստավայր Մարաշում աթոռակալելու, եւ երբ նա հրաժարվեց, այստեղ 1085 թ. նոր կաթողիկոս ձեռնադրել տվեց Վարագավանքի վանահայր Պողոսին (Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1532): Հիշյալ հատվածի մի տարբերակը տեղ է գտել Անեցու Ժամանակագրության՝ 1893 թ. հրատարակության մեջ՝ 1082 թվականի ներքո՝ Մատենադարանի թիվ 1899 ձեռագրից քաղված, որը հետեւյալն է. «Ի սոյն ժամանակս ի Դ. (4) բաժանեցաւ Հայոց կաթուղիկոսութիւն՝ տէր Վահրամ, տէր Գրիգորիս՝ յԵգիպտոս, տէր Բարսեղ՝ յԱնի, տէր Պօղոս հայրն Վարագայ՝ ի Մարաշ, տէր Թորոս՝ ի Հայնի»: Վահրամ-Գրիգոր Վկայասերի առժամանակ Եգիպտոսում գտնվելու, իսկ հետո որպես տեղի եպիսկոպոս (երբեմն նաեւ կաթողիկոս անվանված) իր քրոջորդի Գրիգորիսին թողնելու մասին տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1500-1502, Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, Երեւան, 2010, էջ 37:

9 Սուր - Տյուրոս քաղաքը Լիբանանում:

10 Կեսարիա Պաղեստինում, հայկական աղբյուրներում կոչվում է նաեւ Սզայր, խաչակիրներն այն գրավել են 1101 թ. մայիսին:

11 Տրապոլիս - Տրիպոլի ծովափնյա քաղաքը Լիբանանում:

12 Խաչակիրները Պաղեստինում գտնվող Ասկալոնը (Աստղալա) գրավել են 1153 թ.:

13 Գի դը Լուսինյան - Երուսաղեմի թագավոր (1186-1194), Կիպրոսի թագավոր (1192-1194):

14 Ճաֆ - Յաֆֆա - ծովափնյա քաղաք Պաղեստինում:

15 Պատմագրության մեջ բավական ժամանակ Անիի Զաքարյաններին անցնելու թվական է համարվել 1199-ը, սակայն վերջին շրջանում ի հայտ են եկել 1198-ը նշող աղբյուրներ՝ Հռոմոսի մի վիմագիր եւ հիշատակարան, որոնց գումարվում է նաեւ ներկա հավելումը: Տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անիում Զաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի., «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թ. 1, էջ 280-283: Ա. Շահնազարյան, Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 140-142:

16 Պէմոնտ - Անտիոքի պրինց Բոհեմունդ Գ. Կակազ (1163-1201), որին հաջորդել է որդին՝ Բոհեմունդ Դ. Միակնանին (1201-1216, 1219-1233):

17 Հէմրի - Կիպրոսի թագավոր Ամորի Ա. (1194-1205):

18 Կիլիկիո Լեւոն Բ. (1-ին) թագավորը 1216-ին քաղաքը գրավելով՝ Անտիոքի պրինց է դարձրել իր եղբոր թոռ Ռուբենին:

19 Դամբլցիք (Տեմպլիերս) կրաճարական ասպետներ են, Դարպսակը՝ Կիլիկիայի արեւելյան սահմանային բերդ:

20 Լանկուպարտքն - Լանգոբարդներ անունով (նույնանուն գերմանական ցեղը նկատի ունենալով) հեղինակը կոչում է գերմանական կայսեր ուղարկած զորքերը:

21 Նավարայի թագավորի (ռե - ֆրանս.՝ռուա) եւ այլ քրիստոնյա առաջնորդների զորքերը 1239 թ. նոյեմբերին պարտվել են Գազայի (Ղազե) շրջանում:

22 Շամպը ներկայիս Սիրիան է:

23 Այս դեպքի մասին Հ. Աճառյանը գրում է, որ Սարգիս արքեպիսկոպոսը «Հուլաղու խանի կողմից դեսպան ուղարկվեց հունաց Միքայել Պալէոլոգ կայսեր մոտ եւ նրա Մարիամ աղջկան հարս բերավ Հուլաղուին: Բայց Հուլաղուն մեռած լինելով, որդին՝ Ապաղա խանը ամուսնացավ նրա հետ: Այս առթիվ Ապաղա խանը քրիստոնյա դարձավ եւ Սարգիսը մկրտեց ու պսակեց նրան (1265 թ), Անտիոքի պատրիարքի հետ» (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երեւան, 1948, էջ 425):

24 Երզնկայի Սարգիս արքեպիսկոպոսը ժամանակին մեծ հռչակ է ունեցել, իսկ նրա որդին՝ Հովհաննեսը, եղել է աշխարհիկ իշխանավոր: 1272 թ. Երիզա վանքում գրված հիշատակարանում ասվում է. «Գրեալ եղեւ սա ի գաւառս Երիզա, որ յորջորջի Եկեղեաց գաւառ, ի հայրապետության տէր Սարգսի, իշխանակալութեան որդոյ նորա պարոն Յոհանիսի, որ է ի ժամանակս սոցա խաղաղութիւն Քրիստոնէից» («Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԳ. դար, կազմեց Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 426): Սարգսի սպանության համար մոնղոլները վրեժխնդիր են եղել, ինչպես հայտնում է Ստեփանոս Օրբելյանն իր ժամանակագրության մեջ (Մատենադարան, ձեռ. թիվ 8481):

25 Տեղեկությունը սխալ թվականի դիմացէ, պետք է լիներ 1342 թ. ներքո, որը համապատասխանում է Կիլիկիո Լեւոն Ե. թագավորի մահվանը եւ Ջեհան Լուսինյանի կարճ կառավարմանը (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ., Երեւան, 2007, էջ 407-415):

26 Կիլիկիայում դժվարին պայմաններում աթոռակալած Գրիգոր Ը. Խանձողափի գահակալման տարիներ են համարվում 1411-1418 թթ.: Հայտնի չէ, թե նա որտեղ է աքսորվել եւ թե նրա նկատմամբ ինչպիսի բռնություն է կիրառվել:

27 Փիլիպոս Ա. Աղբակեցի կաթողիկոսը մահացել է 1655-ին, Ներսես Ա. Սեբաստացին՝ 1654-ին, իսկ Արիստակես վարդապետը 1654 թ. հիշվում է Խարբերդում՝ «...զծերունի վարդապետն Խարբերդցի Արիստակէս, մականուն Ղարիուզ կոչեցեալ» («Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԷ. դար, հ. Գ., կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1984, էջ 596):

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ